



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 7 ՆՈՅԵՄԲԵՐ 1887

ԹԻԻ 3897

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ կը հրատարակուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 փոսթի: Բաժանորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլիսի համար տարեկան կէս եւ վեցամսեայ քառորդ Օսմ. ոսկի: Գաւառացի համար 70 դրշ. եւ օտար երկրացի համար 15 ֆրանք: Բաժանորդագրութեանը դրկելու է առ մատակարարութիւն Սրեւելքի եւ Մասիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատունկեան խան:



ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

- Ազգային Տեսութիւն. Ազգային Նախնաձայնագրութիւն:
- Ազգային պատմութիւն. Ա. (ՎԱՐԴԱՆ Կ. ԱՐՄ-ԼԱՆԵԱՆ):
- Մայրութիւնը ֆիզիքական եւ բարոյական աշխարհի մէջ. (ԷՐԵՆԵՍԹ ԼԵԿՈՒՎԼԵՅ Ա. Կապուսկան):
- Գծադրութիւն. Իւր ուսումը մեր վարժարանաց մէջ եւ հետեւողները: (Յ. ՖԵՐՎԱՃԵԱՆ):
- Նոյն օրերը Ա. յիշատակին ի վերջ. (Գ. ՂԱԿ՝ ՕՃԱ ԱՐԱՄԱՂԻ. (ՎԱՀԱՆ Վ. ՊԱՐՏԻՋԱԿՅԻ) Վէպ. Հայաստանի բարբեր. Սիսակ եւ Սոսուն, Բռնութեան ստիպելներ. (Վ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ):
- Քաղաքացիական Լրոյց. Արտաքին, Ներքին, Ազգային:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԱԹ 6 ՆՈՅԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱՆՁԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ

Մեր անցեալ շաբթուան խմբագրականով գոհութեամբ կը հաստատէինք այն համեմալութիւնն որով ամեն ազգայինը, ո՛ր է գասակարդէ ալ լինին, լրջութեամբ ըմբռնած են Տ. Յարութիւն Սրբադանի հրաժարման խնդրոյն կենսական կարեւորութիւնն: Արդարեւ, կարի ուրախառիթ պարագայ մ'է այս, որ ցոյց կուտայ թէ Ազգ. Նախնաձայնագիրն է իւր հանրային շրջանակի մէջ կատարուող գործոց եւ հետաքրքրութեամբ կը հետեւի անոնց ընթացքին:

Դժբաղդաբար ամեն անգամ չենք կրնար արձանագրել այս տեսակ ուշադրաւ պարագայներ ազգ. Նախնաձայնագրութեան մասին: Այս տեսակ ըզգացումներ խիստ հազուադէպ են մեր մէջ եւ միմիայն առաջնակարգ կարեւորութիւն ունեցող խնդրոց մէջ ի յայտ կուգան, մինչդեռ պէտք է որ ազգ. Նախնաձայնագրութեան ոգին ամեն բա-

նի մէջ տիրէ, մեծագոհնին որպէս եւ վերադարձնին մէջ: Սակայն, մեր հասարակութիւն տակաւին հեռի է ըմբռնելէ ազգայնութեան ոգւոյն այս հիմնական հանգամանքը: Օրինակները բազմաթիւ են, մեր անոնցմէ մի քանին յառաջ բերենք աստ. Առեւտրական կամ հանրային հաստատութիւններ ունինք բաւական թուով որք թէ հայ հասարակութեան դիմելու հարկին մէջ գտնուին մասնաւոր յայտարարութեամբ մը, կը տեսնենք ցաւ ի սիրտ որ այս յայտարարութիւնը կը լինին հայ տառերով եւ ոչ հայ լեզուաւ, որպէս թէ հայերն իրենց լեզուն ունեցած չը լինին եւ կամ զայն հասկնալու կարողութիւն չունենան: Բերայի մէջ եւ այլուր կը հանդիպենք հայ եւ օտար վաճառատուններու որոնք իրենց նշանակին վրայ կը մոռնան գրել հայերէն լեզուաւ իրենց անուանքն որք գրուած են կամ գաղղիերէն եւ կամ յունարէն լեզուաւ, իբր թէ հայք պարտաւոր եղած լինէին սովորած կամ դիտցած լինելու այդ երկու լեզուներն: Երբ Պոլսոյ մէջ կը գտնուին այնչափ մեծ թուով հայեր, եւ երբ այդ խանութներու շահուց մէկ մեծ մասը կը հայթայթեն հայեր, արդեօք իրաւունք չ'ունին պահանջելու որ տրուի իրենց լեզուն այն յարգն որում արժանի է: Բերա կրնանք ըսել թէ այսօր մայրաքաղաքիս հայոց նշանաւորագոյն կեդրոնն է եւ հետզհետէ հայոց թիւը կ'աւելնայ անդ. այս կերպով տարակոյս չը կայ թէ Բերայի հանրային հաստատութեանց, թատրոններու, զբօսարանաց, դարեջրատանց, ակմբոց եւն եւն յաճախորդներու մեծ մասն հայեր են: Եւ սակայն բոլոր այդ հաստատութեանց մէջ հայերէնը վտարուած է. զբօսարանի մը մէջ չեմ կրնար գտնել հայերէն թերթ մը: Եւ չկայ հայ մը որ այս պահանջը հաստատութեան տնօրէնին, եւ բոլոր բառնայ նմա: Տարակոյս չը կայ թէ մէկ երկու օրինակ թերթ աւելի ծախելով հայ լրագիրք աւելի գոհացուցիչ վիճակ մը չը պիտի ունենան, բայց խնդիրն հոն է որ հայք այսպէս վարուելով յաշտ օտարաց պիտի ստանան աւելի մեծ կշիռ եւ պիտի ցոյց տան բարոյական ոյժ մը որ կը պակսի հայ տարրին:

Այս անտարբերութեան շարքը կըրնանք անսահման կերպիւ երկարել: Այն յոռի սովորութիւնն, որով օտար-

ներու վարժարաններ կը ղրկենք մեր դաւաններն եւ այսպէս ի կորուստ կը մատնենք թէ՛ անոնց ապագայն եւ թէ՛ մեր դրամն, ազգային աննախանձախնդրութեան աչքի զարնող կողմերէն մին է:

Հայ լեզուն, հայ կրօնքն, հայ պատմութիւնն եւ ի կարգին, որք մեր գոյութեան շէնքին խարիւնն են, պէտք եղած սրբութեամբ չեն յարգուիր ի մեզ: Մեր վարժարանաց շատերուն մէջ դեռ հարկ եղած լուրջ կարեւորութեանը չը տրուիր այս ուսմանց, որք հայ տղուն համար ամենէն էական բաներն են:

Ձեռք ուղեր խօսիլ այն կարգ մը թեթեւամիտներուն վրայ որք իրենց լեզուն չը գիտնալ կը ձեւացնեն, իրենց անուներն փրանալու կամ եւրոպական ձեւի կը վերածեն եւ որք այս անսակ գործերով աւելի ծաղրելի կ'ընծայեն իրենց անձը:

Վերոյիշեալ բոլոր իրողութիւններն ահա յայտնապէս կ'ապացուացնեն հայուն անտարբերութիւնն իւր ազգային ոգւոյն համար: Յաւայի եւ անպատուաբեր բան մ'է այս միանգամայն, որ ամեն ճշմարիտ հայու սրտին վիշտ կը պատճառէ: Թո՛ղ չ'ըսուի թէ մեր յիշած իրողութիւնը չնչին բաներ են. այդ երկրորդական պարագայից ամբողջութեան կը ծնի ազգային նախնաձայնագրութիւնը:

Նախնաձայնագիրը լինիլ այն ամեն բաներու մէջ որք Ազգին արժանապատուութեան կը դպչին, համեմալութիւն ցոյց տալ ազգային ամեն խնդրոց մէջ, բարձրացնել եւ ծանօթացընել հայն յաշտ օտարաց, այս պէտք է լինի ամեն հայու սկզբունքն: Երբ մեր հայերս աննախանձախնդիր լինինք մեզ համար, տարակոյս չը կայ որ օտարներէն շատ հոգածութիւն եւ յարգմտութիւն իրաւունք չենք կրնար ունենալ:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա.

Իւր ուղղութեամբն համայնից պատկառելի Կրօնական Ժողովն Երեւանի հանդիսի յունիսի ամսաթիւոյն մէջ «Արգար եւ Լարուրնիս» վերնագրով հրատարակեալ յօդուածին առթիւ գիտել տուած է հեղինակ Արթ. Հօր թէ «Չէր արժան համարձակիլ անտեղի քննադատութեամբ ընդ կատարածնոր հրատարակել զայն, զոր ինչ Խորենացի, Փարպեցի, Յովհաննէս Կաթողիկոս, Էսէֆիկոս եւ այլք ստուգադրած են»։ Այսպէս ընթերցանք Արթ.ի պատուական օրաթերթի 1144 թիւոյն ազգային լրոց բաժնին մէջ։

Արեւել զնախնիս եւ մեծապատիւ մեծարել զնոսա, գեղեցիկ են արգարեւ մանաւանդ թէ անխուսափելի պարտիք որդւոց ուստի եւ Ազգային Կրօնական Ժողովն հայրական իր յորդորներով կը պատուիրէ զգուշանալ ի թերանալու սոյնգունակ պարտաւորութենէ։ Քաղցր է մեզ հաւատալ թէ զոյգ ընդ ծանօթ որոշմանդ յանձնարարած է եւ առ ձեռնհաս հետադատել խնդիրն եւ պատմական ապացոյցութեամբը հաստատել նախնի մեր պատմագրաց վկայութեանց ճշմարտութիւնն։ Առանց անոր կը կատարուի թէ խնդրոյ ներկայ վիճակի մէջ՝ հարցասէր ամեն միտք իրաւունք պիտի ունենայ յեղյեղել Արիւմտութեան ծանօթ առածը թէ «Արեւի է ինձ Պղատուն, այլ ամեն բանէ աւելի կը սիրեմ ճշմարտութեան»։

Գրախոսութեան, Թեան,

վերայ համառօտ տեսութիւն մի առաջի առնել հասարակաց դատողութեանն՝ աւելի եռանդեամբ քան հմտութենէ իրիք թեւադրեալ։

Օտարազգի մատենագիրք խիստ քննութեան ենթակայ ըրին ամենէն աւելի Խորենացւոյ պատմագիրքն եւ իրաւամբ, քանի որ խնդիրն ծերունին միայն ի պատմագիրս մեր կը խօսի զժամանակէ ազգին եւ Հայկականց 2,000ամեայ տեւողութեամբ հարըտութեան վերայ։ Օտարազգեաց գիտողութեանց մասին ոչինչ ունիւմ ըսելիք։

Հ. Միքայէլ Չամչեան է առաջին մեր ազգի պատմագէտն որ Խորենեան աւանդութիւնը քննելու համարձակած է։ Տասըն երեք դարերէ հետէ ազգովին վաւերացեալ այդ աւանդութեանց մէջ նշանակած է նա՝ 1. Թէ չէ Արտաշէս՝ Լիւդացւոց Կրեոսոս արքային ձերբակալողը, այլ Կիւրոս, ըստ արտաքին ժամանակակից պատմաց։

2. Թէ Արշամ, Արգար, Անանէ եւ արքայից ժամանակ ի Հայաստան թագաւորած են շատ մը հայ թագաւորներ՝ անձամբ եւ զործերով յիշատակեալ ի Հռովմայեցի պատմիչաց։

3. Թէ Արշակ Բ. չէ թագաւորած երսուն տարիներ այլ հազիւ միայն տասն եւ ութ։

4. Թէ Մեծն Ներսէս Պարթեւ Հայրապետեան Աթոռոյ գահակալն եղած է քրսան տարիներ եւեթ եւ ոչ թէ երսուն եւ չորս տարիներ։

5. Թէ Պապ, Վարազդատ նշանակուած էն պակաս տարիներ թագաւորած են։

Այս երբեակ գլխոց ժամանակաց փոփոխումն անհրաժեշտ է ստոյգ ժամանակագրութեան հետ համաձայնեցնելու համար պատմուած դէպքերն եւ առանց որոց կեղակարծ կը լինին պարզապէս այդ դէպք։

Թէ Արգար իրօք թագաւորած է Հայոց, Չամչեան խիստ ընտիր ապացոյցներ ի ձեռին հաստատած է ընդդէմ Աստէմանեայ Ասորւոյ յարուցած տարակուսիցն եւ Չամչեանէ գիտեմք թէ Աստէմանի եղած է առաջին աւարկութիւն յարուցանողն առայդ։

Չամչեան՝ Խորենացւոյ քննութեան մասին պատկառ կեցած է ստոյգ աւանդութեանց, Ա. Թէ Մովսէս Խորենացին սլորութեան կենցաղաւ ապրած է, Բ. Թէ անաշառօրէն պատմած է դէպքերն որոց ականատես էր, Գ. Թէ իր առջեւ ունէր իրօք այն պատմական աղբիւրներն զորս կը յիշատակէ եւ բոլոր կոչումներն իրօք իրենց աղբիւրներէն քաղել է առանց յերիւրելու։ Երեք հիմնական սկզբունքներ որովք միայն պատշաճօրէն կրնայ միւիլ որ ի քննութիւն Խորենեան աւանդութեանց։

Բայց այդ նախադրեալ սկզբունքները ճանաչելով՝ հանդերձ Հ. Յովսէփ Պատմը՝ ձեռն իւր Տիեզերական պատմութեան մէջ Պապի, Վարազդատի ժամանակաց համառօտութիւնը չ'ընդունելով ըստ Չամչեանի, պատմութեան մասին իսպառ կը հեռանայ ի Խորենացւոյն եւ կը մերձենայ առ Բուզանդ Փոստոս, զոր եւ համաձայն գրտնելով ընդ Ամիրանու՝ յոյն ժամանակակից պատմի, կը նշանակէ։

Ա. Թէ Պապ սպանաւ ի Հայաստան եւ այն 374 թիւին, որով եւ չէր ժամանակակից Մեծին Թեոդոսի այլ Վաղէս կայսեր։ Բ. Թէ Վարազդատ 377 թիւին գահընկէց եղած՝ չէ ժամանակակից Թեոդոսի, եւ որ մեծն է։

Գ. Թէ Մեծն Ներսէս 373 թիւին վախճանելով՝ չէ գտնուած ի Ս. Ժողովն Կ. Պոլսի — ինչպէս որ ժողովին արձանագրութեան մէջ չը կայ իւր անուն —։

Պատմը՝ ձեռն հակառակ է Չամչեանի այն կարծեաց թէ Արշամ, Արգար եւ Անանէ արքայից ժամանակ Հայաստան երկու մասերու բաժնուած էր եւ զօրեղ հաւանականութիւն կը տեսնայ Խորենացւոյ պատմութեան թէ Արգար կառավարած լինի զբովանդակ Հայաստան՝ յաթոռոյն Եղեփոյ։

Ինչո՞ւ Բուզանդարանի կրցած է հետեւիլ Պատմը՝ քանի որ հաւատարիմ է Երբեակ սկզբանցդ։

Կրկին պատճառք կան այդ մասին։

Ա. Վաղար Փարպեցի կը նշանակէ արգարեւ թէ Բուզանդարանի մէջ թշնամի զրիչ մը բաներ փոփոխած է, բայց (զըժբաղդաբար) չէ նշանակած թէ ո՞ր կէտերն են յորոց պարտի զգուշանալ ընթերցողն։ Աւտի եւ պատմագէտն՝ ազգի դէմ Փոստոսի գործածած յախուռն լեզուն միայն յօտարաց ներմուծեալ գաւանելով, այլն ամենայն, ըստ մեծի մասին, չի խղճեր երբէք իբրեւ ժամանակակից եւ ականատես պատմիչ գործ նկատել։

Բ. Որովհետեւ ո՛չ որ կարող է քննադատէն պահանջել որ ճանչնայ զԽորենեան պատմագիրքն իբր արքայի ներշնչութեամբ։

Որ ընդունի թէ գարուց եւ ժամանակաց մթութեան մէջէն Խորենացւոյն ձեռքն հասած աղբիւրք նոյնութեամբ մնացել էին ցայն օր անէղծ վիճակի մէջ։

Եւ եթէ նոյն իսկ մնացել էին՝ այդ աղբիւրք

բերաց հեղինակը էին աշխատիչ համար Խորենեան անխարդախ ոգւոյն։

Եւ որ մեծն է՝ առանց կրօնական «կրթանց հակառակել» կրնայ անշուշտ զԽորենացի իրբեւ մարդ սխալական նկատելով չ'ընդունիլ իր անթերի՝ նորա դատողութիւնը։

(Ինքն իսկ Խորենացին կ'անուանէ զինքն «այր ծեր եւ անպարապ ի թարգմանութեանց»։ չը մոռնար նշանակելու թէ շատ անգամ համառօտած է բնագրաց խօսքերը)։

Չամչեանի ժամանակագրութիւնն ընդունուած է Ազգէն։

Պատմը՝ ձեռն փոփոխութիւններէն Մեծին Ներսիսի վախճանման թուականն առանց գիտողութեան ընդունած է Հ. Ղ. Արիշան իր «Շնորհալի եւ պարագայ իւր» գրքովի մէջ։ Իսկ միւս դիպաց եւ թուականաց փոփոխումն, որչափ կրնամ յիշել, կրկնուեցան անձանթ «Բանասէր» մը միայն որ կաթիլէրիս Փրանցաւոյն «Հայաստան եւ Հայք» գործն ի հայ յեղով տպագրեց ի Մասիս Օրաթերթին 1882-83 ամաց։

(Այն բանասէրն եղած է առաջին մերազգի քննադատն որ Արգարեան խնդրոյ մէջ հակառակած է Խորենեան աւանդութեանց, եթէ չեմ սխալիր)։

Չամչեանի է արգարեւ որ քանի մը տասնեակ տարիներէ հետէ ոչ որ մոռարեւած է պատմասխանել առ Պատմը՝ Նոյն ինքն եկեղեցական իշխանութիւնը միթէ պարտաւոր չէր հոգալ զայդմանէ։ Ե՞րբ Մ. Եպիսկոպոս Եղիշեան չի կրկնէր այդ խնդիր «Հայրապետութիւն Հայոց» մատենին մէջ, մինչդեռ յանկարեւորացն չէր Մեծին Պարթեւի մասի յարուցեալ խնդիրն չը գիտեմ։

ՎԱՐԴԱՆ Կ. ԱՐՍԼԱՆԵԱՆ

ՄԱՅՐՈՒԹԻՒՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

(Շար. Նախորդ թիւէն)

Իրաւ որ, երբ կարգացի այս խօսքերն, երբ զայն տեսայ հիմնեալ բնաբանական բազմութիւն զննութեանց վրայ, երբ շատ մ'անմահական անուններով ծածկուած գրտայ զայն, իսկական եւ խորին եղաւ անձկութիւնս։ զի չենք կրնար սքօղել, կանանց հաւասարութեան խնդիրն ալ հոն կը կենայ անչունչ։ Եթէ այս իրողութիւն ճշմարիտ է, Աստուած ինքն արտասանած է զայն։ Եթէ այն գործն որ կատարեալապէս կը թուի լինիլ կնոջ գործքն՝ իրեն չը վերաբերիր։ Եթէ ազգայն՝ զոր ինն ամիս իւր որովայնին մէջ կը կրէ՝ չէ իւր արարածն այլ իւր բեռն։ Եթէ հայրական արգանդն, այդ աստուածային օրրոցն՝ որ նման էակի մը, կը թուի դողդալ, սարսիլ եւ սիրել, անգործ ընդունարան մ'է եւ եթէ, անաղղեցիկ եւ ստեղծման առանց իրաւունքի այն էակի վրայ զոր ընդունեց, կ'ինն յայնժամ աշխարհի վրայ խնայար՝ եւ երկրորդական արարածի մը դերը միայն կը խաղայ։ յաւելուածական պիտոյք մ'է, ո՛չ ուրիշ բան, եւ զինքը մարդուն հպատակեցնող բոլոր ստրկութիւնք՝ բնութեան կողմէն իսկ նուիրագործուած են։

Այս հետեւութիւնն այնքան ճշգրիտ է, որ ամեն երկիրներու մէջ յորս այս գիտա-

կան վարդապետութիւնն աւելի արժէք ունի, մօր վրայ կարգացուած նշանքը գիտութեանն օրինաց մէջ անցած է, եւ երբեմն իսկ բարուց մէջ:

Հնգկական օրէնքը կ'ըսէ. «Յարգէ հայրդ ու մայրդ: Բայց իսկոյն կը յաւելու. «Առ հայրըդ ունեցած յարգանքդ միայն պիտի բանայ քեզ մթնոլորտային վերադոյն աշխարհը¹⁾»: Առ հայրն սէրը՝ կրօնական պարտականութիւն մ'էր. առ մայրն սէրը՝ մարդկային երախտագիտական գործ մը: Ի Յունաստան, դիւցազնական ժամանակներու մէջ, Ագամեմնոն կը մեռնի իւր Կլիտէմնէսդրա կնոջմէն սպաննուած. եւ ահա Ապոլոն իւր քով կը կանչէ անոր Ուրեսսէս որդին, քաշոյն մը կուտայ ձեռքն, եւ կը հրամայէ զարնել իւր մայրն, զԿլիտէմնէսդրա. եւ Եսթրէլսի Եւմենեանց ուղեբեգութեան մէջ կը քարոզուի սա այլանդակ վարդապետութիւն թէ, Ուրեսսէս ծնողապաշտէ՛ր, զի միայն իւր մայրը մեռցուց: Ապոլոն ինքն Ուրեսսէսի գատը պաշտպանեց Արիստաքոսի ատենին մէջ. մայրն, ըսաւ նա, չ'ըստեղծեր ինչ որ իւր տղան կը կուէ. . . . : Աթենաս, իւր քուէն տալու կոչուելով՝ սա պէս կը խօսի. «Հօր կողմէն եմ ամբողջովին. Ուրեսսէս պարտէ աշարհը աշխարհիկ: Եւ Արաստագետն ատենան, Յունաստանի այդ գերագոյն ատենան՝ որ հին աշխարհի արդարութիւնը գրեթէ կը ներկայացնէր, նըուելրագործեց՝ մայրապաշտ մարդու մը աշատ արձակամբ՝ սա սկզբունքն զոր եւ յայտարարեց օրինական. Մայրը չ'ստեղծեր իւր որդին: Պատմական ժամանակներու մէջ, երբ ընտանեկան մականուններ չը կային ի Յունաստան, եւ թէ իւրաքանչիւր օր ծընած ատեն տարբեր անուն մը կ'ընդունէր, հայրը միայն իրանունը ունէր իւր տղայոց յորջորջման: Արդի աշխարհին մէջ, հօրն անունը միայն կ'անցնի իւր սերնդեան. երբ ազնուականութիւնը կազմուեցաւ, ընդհանուր կանոնով, հարց չնորհիւ միայն կրցաւ յարաբերութիւններ հաստատել իւր մէջ. եւ այսօր վերականգնութեան իրաւունքն հայրերու միայն կը պատկանի: Վերջապէս կարծեցեալ այս հայրական նախապատուութիւնն յառաջ բերած է ծաղրալի եւ ամենուն ծանօթ սովորութիւն մը, բայց ոյր թաքուն նշանակութիւնը լաւ հասկցուած չէ: Կան ժողովուրդներ՝ յորս ո'չ միայն ամուսինն՝ որում տղայ մը կը ընծայէ իւր կին՝ զինիով խորոված կ'ուտէ իւր կնոջ ըստպատած զօրութիւնները նորոգելու համար, այլ եւ, այն ինչ տղայաբերութիւնն սկսած է, անկողին կը մտնէ նա՝ մեղմացուցիչ ըմպելիներով եւ թեթեւ անունքներով: Այս իրողութեան մէջ, որ անհեթեթութիւն կը թուի, կայ իմաստ մը: Այդ ժողովուրդը կը կարծեն թերեւս թէ՝ սերնդական կապը մարդէն առ մանուկը միայն գոյութիւն ունի, եւ այդ կապն այնքան զօրաւոր է որ ծննդեամբն իսկ բնաւ չը խորտակիր: Մանկիկը, թէեւ իւր սեպհական կենօք առ երեւոյթս կենդանի, հայրական առողջութեան ազդեցութեանց ներքեւ է: Արդ, եթէ հայրը մթնոլորտական փոփոխութիւններ ընելէ կ'զգուշանայ, այն վախով է թէ մի՞ գուցէ իւր որդին պաղի, եւ այս տղա-յարբր ամուսինն աւելի ինքնակալապէս է բան Լուի Ժ.Պ. որ կ'ըսէր. «Կառավարութիւնն ես եմ». վասն զի այդ ամուսինը կը կարծէ միայն իւր մէջ՝ բովանդակեալ թէ՛ հայրութիւնը, թէ՛ մայրութիւնը, թէ՛ ման-

կութիւնը, եւ նոյն իսկ դայեկութիւնը:

Առ մեզ գեռ գիտութեան մէկ մասը կաղնիի տեսութեան վրայ կը շրջեցնէր իւր քայլեր, երբ մեծազգեցիկ ձայն մը գալով՝ բողբեց ընդդէմ այդ ամպարիշտ դրութեան: Վերջին դարուց բազմաթիւ դիտուններու ծանօթ կամ անծանօթ աշխատութիւններէ ներշնչեալ, մեր կենդանի մեծանուն բնախօսներէ մին, բարեկամն ու աշակերտն հռչակաւոր Ժոֆրուա Սէնթ-Իլէրի, գիտունն զոր բոլոր Ֆրանսայի բըժիշկը ընտրեցին իրենց պետ բժշկական համաժողովին²⁾, բուռն կերպիւ յարձակեցաւ մօր իրաւանց այդ բնաբարման դէմ:

Ձրահաւորուած արդի արեւեմտագիտութեան բոլոր ձեռնառութեամբք զորս կուտայ նա գիտութեան, հզօրացած քսան եւ հինգ տարիներու անընդմիջական եւ հարիւր անգամ կրկնուած զննութեամբք, եւ կան հուսկ ուրեմն պահանջել կնոջ համար իւր ճշմարիտ տեղին ստեղծական բեղմնաւորութեան մէջ, յայտարարելով մօրն համար իւր ստեղծիչ տիտղոսը:

Անցեալ գիտութիւնը կ'ըսէր. Մայրական արգանդը կ'ընդունի իւր մէջ էակը բոլորովին ստեղծագործուած, եւ տղուն զանալան գործարանաց յաջորդական երեւոյթն ուրիշ բան չէ բայց եթէ կազմակերպումն արդէն գոյութիւն ունեցող մասանց՝ զորս կը սքօղէր մեզնէ՝ մեր տեսութեան տկարութիւնն: Այժմեան գիտութիւնը պատասխանեց՝ տարրալուծումն իրեն առաջնորդ առնելով. Ո՛հ, տղայն իւր մօր արգանդին մէջ առաջին օրէն սկսեալ կատարելագործուած արարած մը չէ որ կազմաւորեալ մարդէն իւր փոքրկութեամբ եւեթ տարբերի: Ո՛հ, անզգայ ընկեր մը չէ մայրն որ իւր տղայն սնուցանելու պաշտօնը միայն ունենայ: Նոր արեւեմտագիտութեան ձեզ տուած նոր աչքերով դիտեցէ՛ք մանուկն ածման բոլոր ժամանակամիջոցին մէջ, եւ պիտի տեսնէք թէ՛ էութեան բոլոր աստիճաններէն կ'անցնի նա հեռագիտէ. նախ թոյլ մարմին մ'է, յետոյ ձուկ, յետոյ սողուն, յետոյ թռչուն, յետոյ ստեւեր, եւ հուսկ յետոյ մարդ. կտոր առ կտոր կը կազմաւորի նա. եւ այլ եւս հօրը գերիշխանութեան դաւանութիւնը կը տապալի: Նա չէ՛ միայն որ կ'ստեղծագործէ մանուկը, քանի որ մանուկը չէ ստեղծուած իւր մարդերս հայրական գործողութիւնը կը դադրի: Յառաջ բերուած արդեան պէտք է երկրորդ գործիչ մ'աւ, այսինքն՝ մայրը. մայրն՝ որ մանկան իւրաքանչիւր գործարանաց ստացման ներկայ է. մայրն՝ որ կուտայ նմա մի առ մի բոլոր անոր դէնքերը. մայրն՝ որ շարունակաբար կը բարձրացնէ զայն մինչեւ մարդկային տիպարը: Մայրն, հակառակ արեւելեան հին վարդապետութեան, գրեթէ հօրն հաւասար մասնակցութիւն մ'ունի իւր սերնդեան ստեղծագործման մէջ: Հօրն է, արդարեւ, առաջին թելադրութիւնը, բայց մօրն է ճշմարիտ կազմաւորումը:

Բուսոց, անասնոց եւ մարդկան բնական պատմութեանց քաղուած բազմաթիւ շահեկան օրինակներ մեզ կը ցուցնեն մայրական սոյն կարեւոր գործողութիւնը: Ձանազանախառն ծաղկունք, ինչպէս ամեն ոք գիտէ, իրարմէ տարբեր՝ բայց մի և նոյն սեռին պատկանող ծաղկանց երկու տեսակներու զուգախառնութենէ յառաջ եկած ծաղիկներ են: Առջեւ, օրինակի համար,

*) Précis d'anatomie transcendante, Գլ. 2. De l'épigenèse, ի Պ. Սէնթ:

կարմիր կոընկենի (geranium. ըթըր) մը, եւ կոընկենի մը սեւերու թագաւոր կոչուած, մտցուցէ՛ք միոյն արգասաւորիչ փոշին միւսոյն պորտին մէջ, եւ ադ կից պիտի արդիւնաւորի նոր տեսակ մը, զանազանախառն մը: Արդ ուրեմն, գրեթէ միշտ այդ զանազանախառն ծաղիկն յառաջ պիտի բերէ աւելի մայրական տիպարն քան թէ հայրական, այսինքն, եթէ կարմիր կոընկենին է գ ծաղիկն է, զանազանախառն ծաղիկը կարմիր կոընկենուն յատկութիւնը պիտի կրէ, եւ իրմէ բացուած ծաղիկներն գամ քան զգամ զէս այդ տեսակին վերադառնալ սլիտի ձգտին³⁾:

Նոյնն եւ անասնոց մէջ: Ձուգաւորեցէ՛ք ձի մը էգ իշու մը հետ, արդ ինքը պիտի լինի այն՝ որ ծնած ձագն աւելի իշուն պիտի նմանի քան թէ ձիուն: Ձուգաւորեցէ՛ք, ընդհակառակն, էջ մը եւ զամբիկ մը, պիտի ստանաք ջորին որ ձին կը ներկայացնէ առաւել քան թէ էջը:

Նոյնը վերջապէս մարդկային ցեղերու համար: Աշխարհակալ ժողովուրդ մը բռնութեամբ կուգայ հաստատուիլ օտար երկրի մը վրայ, ինչպէս, օրինակի համար, Ֆլորանները Գալլիոյ վրայ: Ընդհանրապէս, տեղացի կանանց հետ իրենց կենակցութենէն ինչ կը հետեւի: Այն թէ, մի քանի ծնունդներէ վերջ, այդ զուգաւորութենէ կազմուած ժողովուրդն յառաջ կը բերէ ո'չ թէ յաղթող ցեղին, այլ նուաճուած ցեղին յատկութիւնները: Մարք ցմրուր կը քամեն հայրական տիպարն: Ադ կից է էթիէն Բասթիէ, երեւելի իրաւագիտին, սա խորաթափանց բառը. Գալլիան կը յառ սքերէ Գալլիացիներ:

Իրենց նախատիպ յատկութիւնն իրենց սերնդեան հաղորդելու մարց վերապահուած այդ կարողութիւնն, սուանց հակապատասխանոյ, կ'ապացուցանէ իրենց գործողութիւնը մարդկային ծննդագործութեան մէջ. եւ սոյն կարողութեան իրենց համար կը ծնի այն մեծաշուք առաւելութիւնն՝ որ բնութեան այլազան տիպարներու իւրաքանչիւրն իւր առանձին անհատականութեան կը վերադարձնէ: Արարչէն ստեղծուած բոլոր մարդկային ցեղերու պահպանողներն են կանայք, այսինքն՝ այն ամեն բանի որ՝ մարդկային բնութեան մէջ՝ սկզբնական է, յատկանշական է եւ պէսպիսական:

Ընդհանուր տեսակին կատարելագործման մէջ, աւելի բարձր գեր մ'եւս վերապահուած է անոնց:

Սոյն իրողութիւն մեր բոլոր ուշադրութիւնը կը պահանջէ:

Այն ամեն սքանչելեաց մէջ որոց ամեն օր մեր գործարանները կամ վկայ են կամ դեր կատարող՝ կայ հաստ մը՝ որ ինձ աւելի եզակի համարուած է քան միւսներն: Ընդերկար աշխատութիւն մը զձեզ վաստակեցուցած է, երկարատեւ անընթեմութիւն մը ձեր իմացականութիւնը տկարացուցած. լաւ. թողէ՛ք սենեակնիդ, մի քանի վայրկեան դրսի օդը շնչեցէ՛ք, եւ ահա իսկոյն գլուխիդ կը թեթեւանայ, սրտերնիդ աւելի ազատօրէն կը բարախի եւ անդամոց թու-

*) Բոլոր այս շահագրգիռ դիտողութիւնները քաղած ենք Պ. Մաթիէօի գրքէն, Etudes cliniques sur les maladies des femmes. մասն Գ. գլուխ Դ: Բիշ գործեր այնքան իրողութեամբք, իմաստասիրական զննութեամբք եւ նոր տեսութեամբք ճոխ են քան այս գիրքը:

¹⁾ Օրէնք Մանուկ: Գիրք Գ:

լուծիւնն իսկ կը ցրուի : Քաղքէն գիւղ գը-
նացէ՛ք , գաղտնիքն աւելի կը կնճռուի .
միւսնոյն ատեն կը բազմապատկին այն թա-
քուն եւ բարերար գործիչին՝ օղին՝ ազգե-
ցութիւններն :

Այլ եւս ո՛չ միայն անցողական անհատ-
գըտութիւն մ'է՛ զոր կը ցրուէ այդ օգն ,
հապա ձեր ամբողջ էութիւնն է որ կը վե-
րանորոգի : Անունդը թերեւս աւելի կը նը-
պաստէ ձեզ , բայց նպաստելով հանդերձ
կը թմբեցնէ զձեզ . զի նին կ'սթափեցնէ ,
բայց սթափեցնելով հանդերձ կը գինովցնէ .
ընդհակառակն , օղը թէ՛ բաղլըր է եւ թէ՛
զօրաւոր . կը հանգարանեցնէ եւ կը կաղ-
դուրէ , կը թուի նոյն իսկ թէ հոգւոյն վը-
րայ ալ կ'ազդէ : Այո՛ , երբ մեծաբանակ օղ
կը շնչէ մարդ , կ'զգայ թէ իւր սիրտն յայն-
ժամ աւելի հակամէտ է խանդաղատական
զգացմանց առջեւ բացուելու :

ԵՐԵՒԱՆԻ ԼՐԱԿՈՒՄԷՆ

Ազգայնական

(Մասնաւոր յաջորդ խոսք)

ԳԾԱԳՐՈՒԹԻՒՆ

Իւր ուսուցումը մեր վարժարանաց մէջ
եւ հետեւանքները

Հինգ ամ շարունակ ուսումնասիրեցի Պոլ-
սական կեանքի բոլոր այն կողմերը , զորս
կրցայ , իբրեւ ուսանող անշուշտ ուսանո-
ղական շրջանակի մէջ աւելի ուսումնասի-
րեցի եւ իբր մասնագիտութիւն սովորող ,
հարկ չը կայ ըսել թէ քան զամեն ինչ լա-
ւագոյնս ուսայ՝ նկարչութիւնը զոր ընտրել
էի ի վաղուց : Աշակերտութիւն եւ դասա-
տուութիւն ըրի միանգամայն . սակայն հայ
վարժարաններու մէջ աւելի դասեր արուիլը
տեսայ քան դասեր տուի : Զորս ամիս մի-
այն պաշտօնավարեցի . ինչո՞ւ ոչ աւելի ը-
սեմ . . . վասն զի , շատ երիտասարդ էի և
բոլոր յանգանքս էր այդ . . . Պոլսոյ մէջ
անպատճառ ալեւոր լինելու է վարժարա-
տութիւն կարենալ ընելու համար :

* * *

Գծագրութիւն ըսուած բանն ինչո՞ւ հա-
մար դաս կը արուի մեր բոլոր վարժարան-
ներու մէջ :

Այս հարցման պատասխանն ես ոչ ոքէ
կրցայ առնել ճշգիւ , եւ սա համոզման է-
կայ թէ , գծագրութիւն կը դասաւանդուի
մեր դպրոցներու մէջ , անոր համար զի եւ-
րոպացիք ալ անանկ կ'ընեն . բայց ինչո՞ւ
կ'ընեն , հարցասիրող չը կայ : Ինչ որ եւ-
րոպացիք կ'ընեն յայտնի է թէ լաւ կ'ընեն ,
բայց մենք անոնցինին նման բան մը կ'ը-
նենք եւ ոչ իսկապէս անոնց պէս . ահա
հոս է ցաւալի տարբերութիւնը :

Մեր վարժարաններու մէջ երեւի գծա-
գրութիւնն ո՛չ դասողը կը հասկնայ եւ ոչ
դաս առնողն , ո՛չ դասաւանդողն ճշգրտապէս գի-
տէ թէ է՞ր կ'ուսնի եւ ոչ դասատուն թէ
զի՞ ուսուցանէ , թէ եւ ընթացաւորտներու
հետ դժուար է խօսիլ , զի արուեստագէտի
մը չափ բան ուսած ըլլալ կը կարծեն :

Շատ խելք հարկաւոր չէ կարծեմ ըմ-
բռնելու համար որ , դպրոցական ամեն
պատանիք ալ անխորտ արուեստագէտ չեն
լինիր ի վերջոյ : Եւ եթէ նոցա մէջ կոչու-
ման ցոյցներ ալ կան , ի՞նչ հարկ եւ ի՞նչ
տեղն է թաղային վարժարաններու մէջ

առկ իսկներ պատրաստելը . չէ՞ որ մասնա-
ւոր վարը կայ . չէ՞ որ աղ որ համար ահա-
գին ընթացքներ կան : Զարմանալի ենք մեք .
արդարեւ մի միակ թաղային նախակրթա-
րաններու մէջ ամեն , այո՛ , ամեն բան կ'ու-
զենք սովորեցնել մեր ազգայն :

Երաժշտութիւն ալ երգ ալ կը սովորեցը-
նենք , եւ որքան գեղեցիկ ըլլալը գիտնալու
համար մի անգամ ներկայ գտնուելու է որ
որ և է դպրոցական միջոցաւ չ'սի մի և ինչ :
Խալկինի նմանող գաղնակի մը կ'ընէրանան
ճղած տղոց ճղած ձայներն , որոց ի լուր
մարդուս միտը փուշ փուշ կ'ըլլայ . եւ այդ
անխորժ տալու որութեան տակ , չեմ կըր-
ցած ըմբռնել ի՞նչպէս կը ծախեն ներկայք :
Այս անպիտան ընթացքին պարզապէս
տրդիւնքն այն է որ այսօր Պոլսեցիք եւ ա-
պա բոլոր Թուրքիացիքն ո՛չ մի կատարեալ
արուեստագէտ չ'ունինք անանկ որպէս Եւ-
րոպացիք : Պոլսեցիներէ շատ աւելի պա-
հանքիկ է այս , զի նոցա Թուրքիոյ հայու-
թեան մտաւոր զարգացման կեդրոնին մէջ
ամենէն շատ թուով համախմբուած եւ ա-
րեւմտից հետ անմիջական եւ արագ յա-
րաբերութեանց մէջ կը գտնուին հանա-
պազօր :

Ի՛ր խնդիրէն շատ չը չեղած , իմ կար-
ծիքն սա է որ , մեր վարժարաններու մէջ
հիմնովին տարբեր եղանակաւ մի պէտք է
դասաւանդել գծագրութեան ուսումնս եւ
նորա սոսկ Խալկան կամ Գաղնակն մասը :

Տեղն է որ ըսեմ թէ գծագրութիւնն
երկու գլխաւոր նպատակի կը ծառայէ :
Երբ գծագրողը պարզ արհեստով մի կամ
այս թէ այն գիտութեամբ զբաղող , մ'է գը-
ծագրութեան նպատակը պարզն է , այսին-
քն գործնականն : Իսկ երբ գծագրողը
սոսկ գեղեցիկն գաղափարը նկարագրա-
ցնելու համար ի գործ կը դնէ զայն , այն
պարագային գծագրութիւնը կ'ըլլայ արուես-
տագիտական գծագրութիւն : Արդ մեր վարժա-
րաններու մէջ դասաւանդուած գծագը-
րութեան ամենագեղեցիկն յատկութիւնը
ներկայացուելիք առարկային (ինչ որ
ըլլայ) ճիշդ եւ ճիշդ արտադրութիւնն ըլ-
լալու է : Եւ ճիշդ այս բանն է որ չէ ըմբռ-
նուած ցարդ : Ուրեմն ամեն վարժարան ա-
մենայետին իսկ պէտք է ունենայ իւր մէջ
այս յոյժ կարեւոր ուսում :

Պէտք է ջնջել հին գրութիւնն եւ աւե-
լի հասկնալի եւ աւելի մանկավարժական
մի ուղղութեան հետեւիլ . պէտք է ի բաց
վանել Ժիւլէինի եւ իւր դպրոցի օրինակ-
ներու վրայ մանուկներն սպաննելու եղա-
նակն , եղանակ որմէ դասատուք ալ ոչինչ
հասկցած են , եղանակ որ ուղիղ արամա-
բանութեան հակառակ է : Պէտք է աղա-
յոց սովորեցնել ինչ որ անմիջական հարկա-
ւորութիւն ունի եւ ինչ որ նոցա հասկա-
ցողութեան սահմանը չ'անցնի :

Եւ տեսել եմ շատ դպրոցներու մէջ ոչ
սակաւ պատանիք ոչք այսպէս թէ այնպէս
վերջապէս նմանացուցել են իրենց տրուած
օրինակին , որ մերթ զմեր մը , ծառ մը , տե-
սարան մը , փուռ մը , պտուղներ եւ կը ներ-
կայացունէ : Եւ սակայն վստահ կացէք որ
տղայն ամենեւին չը կրնար այն դէմքին
քիթին ծայրը կամ ծառին մի ճիւղը կամ
փուռին մի ծաղիկն եւ որ ի կարգին , գը-
ծագրել բնութեան վրայ նայելով :

Գեղարուեստից կ' . վարժարանին մէջ ես
հինգ տարի պատեհ ունեցայ 1805-ին աւելի
պատանիներ եւ երիտասարդներ տեսնելու
ճէն մինչեւ 18 տարի աշխատած եւ ա-
մենապարզ առարկայ մը , օրինակ աթոռ մը ,

կաղամբ մը եւ , գծագրելու անկարող :

Ահա որքան սղանիչ ուղղութեամբ եւ
ծուռ գաղափարներով վարակուած են
մեր նորհաս երիտասարդք ոչք լուսագոյն
ուղղութեամբ մի պատրաստուած եթէ լի-
նէին , գեղարուեստից վարժարանն այս
տարուանէն անհամեմատ աւելի թիւով
փայլուն շրջանաւարտներ կրնար ներկայա-
ցնել : Գեղարուեստից վարժարանն յաճա-
խող բոլոր այն երիտասարդք որք գծագը-
ղութիւն ունեցած են իրենց մանուկ եղած
ատեն , այսինքն իրենց հոգեկան կարողու-
թեանց զարգացման ստոր եւ սկսար աստի-
ճանի վրայ գտնուած ատեն , դասեր առ-
նելու մեր վարժարաններու գծագրութեան
ուսուցիչներէ , անխորտ աւերուած են , զի
այդ թարմ տիքէն սկսած մինչև վերջն ան-
դադար վարժուած են միմիակ օրինակները
ճանչնալ , առանց օրինակի ոչինչ ընել եւ
ինչ որ ընել մօտաւորապէս օրինակին ոճով
ընել : Եւ ի լրումն ամեն չարեաց իրենց
դասատուն իբր կատարեալ եւ համայնա-
գէտ արուեստագէտ ճանչնալու ողբալի սը-
խալն ունենալ : Դասատուք ցարդ այնքան
տգէտ գտնուեր են որ բոլոր աշակերտաց
ալ , իրենց շինածներն իբր տիպար հաւա-
տացուցեր եւ իբր արուեստին վերջակէտը
ցուցցեր են : Ասանկով ահա աղային մէջ
սպաննել են իւր իսկական էութիւնն որ ո՛չ
գիտէ ժամանակաւ իրեն շատ մի բարձր
բաներ պիտի ներշնչէր , եթէ տարբեր ուղ-
ղութեամբ մի կրթուած լինէր :

Երկրաչափութիւն բաւական լաւ ուսած
երիտասարդներ կը ճանչնամ որոնց դպրո-
ցական վկայականին մէջ գծագրութեան
դասին դէմ քաջ , քաջալաւ ալ գրուած է ,
սակայն իրենց համակ հիմնութեամբ հաւա-
սարկովեան եւանկիւն մը կամ քառա-
կուսի մը չեն կարող գծագրել առանց որ
եւ է գործիքի օգնութեան :

Արդ եթէ այժմ ինձմէ պահանջուի մի
նոր մեթոտ , ես խոնարհաբար պատրաստ
եմ առ մի գիրք որոյ ուղղութիւն ամենա-
պարզ մահկանացուաց ուղեղին ալ մատչելի
է . այդ գիրքէն մէկ մէկ հատ կ'ունենան
իւրաքանչիւր վարժարանը (մի միայն դա-
սատուն համար է որովհետեւ) եւ տղայք
տասը փարայի գրիչով եւ քսան փարայի
թուղթով կ'ունին շատ բան :

Թերեւս ինձ հարցուի թէ , ի՞նչ պիտի
ընենք մեր վարժարաններուն մէջ այսքան
գերազանց հոգ տանելով գծագրութեան
ուսուցման համար :

Ար պատասխանեմ թէ , այն ինչ որ կ'ը-
նեն արեւմտեան ազգեր . — Հոն արհեստ-
ները սոսկ ուսմամբ եւ գիտութեամբ չէ որ
այն աստիճան զարգացման հասել են , այն
աստիճան հիմնալի , հրաշալի արդիւնքներ
ունին :

Գծագրութեան ուսումնս է որ այնքան
կ'աղնուացնէ եւ կը բարձրացնէ պարզ ար-
հեստից արդիւնքն :

Ամեն պարզ արհեստաւոր երբ դիտէ գը-
ծագրութիւն , իւր գործեր անպատճառ
գեղեցիկ են եւ օր քան զօր եւս առաւել
հրապուրելի : Այս մի հանգամանք է որ թէ՛
չինովին աւելնը կը բազմապատկէ եւ թէ՛
չինութիւնը զնոյն տեսչը կը գրգռէ :

Հետեւանքը պարզ է :

Ինչո՞ւ համար , մենք որքան ալ ազգա-
սէր ըլլանք , որքան ալ պահպանողական ըլ-
լանք , դարձեալ Եւրոպայի արհեստական
արդիւնքը գերադաս կը համարինք քան մեր
երկրայինները . որովհետեւ անոնց գեղեցիկ-
է , ահա բոլոր գաղտնիքն : Ուրիշ հանգա-

մանքներուն ամեն ոք ալ, եթէ չըսեմ մեծ
մասերնիս, քիչ կարեւորութիւն կը տանք :
Պարաշայն ներկայացաւ չեմ կրնար չ'ըսել :
Ենթադրենք թէ մեզմէ մէկը տասն հա-
զար ոսկի արամադրած լինի տուն մը շի-
նելու համար, ուստի հայ տղէտ ճարտարա-
պետներու հետ մէկ հաս մ'ալ գէտ եւրո-
պացի ճարտարապետ մը, որոյ արգիւնը գե-
ղեցկութեամբ եւ ճաշակի բացառիկ առա-
ւելութեամբ կը փայլին, ներկայանան ա-
նոր լաւ ուրեմն, ինչ կը կարծէք տասն
հազար ոսկին հայ անգէտին կուտայ այն
մէկն, եթէ մինչեւ իսկ իւր հարազատը լինի
նա, որ մի անձուռի բան չինէ, թէ չէ
եւրոպացւոյն կուտայ : Եթէ հայ տղէտին
կուտայ, չեմ կրնար ըմբռնել այդ օրինակ
ազգասիրութիւն : Թողունք որ չը տար :
Հայ արհեստաւորին ցարդ չ'ըմբռնած
մէկ կէտն ալ այս առաւելութիւններն են
զորս ունին եւրոպացիք իւր վրայ, եւ որոյ
չնորհի իւր ձեռքէն կ'առնեն ամեն օր իւր
հացն եւ ինք կը բողբոջէ : բայց իւր բողբոջ
կը մնայ միշտ բողբոջ :

Ա. ՖԵԹՎԱՃԵԱՆ

ՆՈՒԷՐ

ՕՐԻՈՐԴ Ա... ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ի ՎԵՆԱ

Սրտի խորին կարօտով
Յիշումս միշտ քոյդ գորով,
Գորով ու սէրդ անուշիկ,
Որ ըստիմէր իմ սրտիկ :

Որդեօք այլ երբ վերստին
կարժանանամ քո տեսին...

Պինդ ուխտեցիր չմոռնալ
Ձիւ եւ օրեր մեր անցեալ :
« Թէ սէրդ մոռնամ » ասացիր,
« Զկայ քան զիս կոյս զաղիր » :

Որդեօք պահում ես անքաղ
կնքած ուխտդ, ի՞նչ հոգեակ :

Անուշ նայումսդ ու ժպիտ
Թընցնում էին ուշ ու միտ,
Դաշնակաւոր քո ձայնիկ
Քըրքըրում էր իմ սրտիկ :

Որդեօք երգե՛, ի՞մ հրեշտակ
Քոյ սիրելոյդ յիշատակ :

Երբ լանջարձակ, զրկախառն
Քեզ հետ, մոռնա՞ծ ողջ աշխարհ,
Քաղում էի համբոյրներ,
Հոգիս մարմնէս բաժնուէր :

Որդեօք երբեմն, անգոյգ Սէր,
Գրկու՞մես զիմ գէթ ըստուեր :

Երբ շուրթ շրթի մեր հըլած,
Իբրեւ մեղու մէջ ծաղկանց,
Մըծէինք սէր ու նեկտար,
Մեր զմայլման վերջ չկար :

Անցած օրեր, է՛ր անցած,
Արդեօք մէկ էլ պիտ' դառնա՞ք :

Բոպէն թանգ էր ու հաշուած,
Պէտք էր սէր, գութ չապլած :
Ողջադուրեւ մեզ զիրար
Կրկին՝ գրեթէ յոյս չկար :

Ա՛խ թէ հնար մի լինէր,
Թողո՞ղ ժամերն արգիլէր :

Ամեն բանի կայ վախճան :
Չարկաւ բոպէն անջատման,
Հոգւոյս թելերն ողբացին,
Աչերս արցունք թափեցին :
Բայց անհրաժեշտ էր մեկնիլն,
Եւ զուր' ողբալն ու տխրիլն :

Օտար երկնից տակ սընած
Ձոյգ մի տատարակ հանդիպած,
Հարկ էր նորէն բաժանուիլ
Եւ Հայրենիք սաւառնիլ :
Գերմանուհի, թո՛ւր հիւսիս,
Ինչպէս թըռայ ես Թաւրիզ :
Դաւրէժ, 1874

Ա. Ռ. Ա. Կ

ՕՉ ԵՒ ԱՐԱՄԱԳԴ

Առ Արամազդ ընծայաբեր
Էին բոլոր կենդանիներ,
Որոյ ի մէջ Օձն ի բերան
Մի վարդ բերէր չընաղապան :
« Ա՛հ, աղաղակեց մեծ Արամազդ,
Գեղեցիկ է այդ ընծայդ,
Այլ զայդ առնու ի թունաւոր
Մի բերանէ, չէ իրաւ որ
Գործ խելացի
Եւ գովելի » :

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՊԱՐՏԻՋԱԿՅԻ

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (11)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ

(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

Լ. Բ.

Սոսունի ընկերուհիքն եւս ներշնչուած
էին միեւնոյն գայլոյթով ու այդ ներշնչ-
մամբ կը վառուին աղէխորով :

Աղօթարանին երկու ժամ հազիւ մնա-
ցած էր՝ երբ Սիսակն եւ Սոսուն՝ իրենց
խմբով եւ փառքով հիւղերնին կը մտնեն
ուր ամեն ոք անքուն եւ անհամբեր ա-
ւետեաց մը կ'սպասեն :

« Այնպիսիներն համբոյցէ՛ք նախ » կ'ըսէ
Սիսակ : Հովիւ Ալօն՝ ուրախութենէն շուա-
րած՝ ամեն ինչ գուարթ կ'երեւի իր ա-
չաց, կը հաչուէ ու կը հաչուէ՝ որոշ թիւ
մը չի գտներ :

Սիսակ տեսնելով որ Ալօն ուրախու-
թենէ հաչուել մոռցեր է, Մուրադին կ'ըսէ
որ այդ բանը վերջացնէ, ու ինքը, զիրենք
գիմաւորող բազմութեան գառնալով, ցնծու-
թեան եւ կեցցենքու աղաղակներով կը
բարեւեն զիրար :

Վարդ խաթուն որ իբր ամենէն փո-
ճառու եւ պատուաւոր՝ զանազան հար-
ցումներով կը հասկնայ անձած գարձածը,
գարմանքէն աչքեր կը մնան բաց՝ ու գուր-
գուրանքով ամենուն փարուած՝ համբոյր-
ներով կ'ողջունէ նոցա գալուստն եւ գոր-
ծած քաջութիւններն եւ իւրովի կ'ըսէ որ
« Սիսակէն աւելի արժանաւոր ընկեր եւ ա-

մուսին Սոսունին » : Դէլ կրնանք գտնել
մէջ մեր երկրին : »

Կալանաւոր աւազակներն առանձին հիւ-
ղակի մը դրան առջեւ եղած աղառածին
կապելով՝ մեծ եւ փոքր հոն խմբուած էին,
ոմանք հետաքրքրութեամբ անոնց վրայ նա-
յելով աղոնց անհեթեթ կազմուածքին վը-
րայ կը զարմանային, ոմանք անոնց հետ
կը խօսէին զայրագին եւ ոմանք էլ Սոսու-
նի նախանձով կը բռնկէին :

Վարդ խաթուն՝ մօտեցաւ այդ անմիտ-
ներուն, իր գլխով երկայնամտութեամբ կը
խօսի այսպէս : « Ի՛նչ անխելք եւ անօրոտ
մարդիկ էք դուք, վայրենի քրդեր, ինչո՞ւ
աւեր եւ կողոպուտներ ձեզի այնքան սի-
րելի են, միթէ դուք մարդ չէ՞ք, ինչո՞ւ աչ-
խատութիւն այնքան կ'ատէք, ահա՛ ձեր
վիճակին հանդիպած էք : Դուք գիտէք որ
եթէ իմ խնդիրը չ'ըլլայ Սիսակը ձեր գլուխն
ինչեր կը բերայ : Բայց դուք գնացէ՛ք դար-
ձեալ զուրպան եղէ՛ք ձեր մատաղ զաւա-
կաց, որոնք հիմա կ'սպասեն ձեզ անհաց...
պիտի արձակել տամ զձեզ, սակայն ուխտ
պիտի ընէք որ այլ եւս մարդկային ազգի
համար վնասակար որ եւ է գործի մէջ չը
գտնուիք : Յարօ՛ եւ Մուրադ, արձակեցէ՛ք
այդ օձերը, թէեւ սխալինք մենք, բայց
ի՛նչ ընենք, մեր գիրքը ներողամիտ լինել
կը սորվեցնէ մեզ : »

Յարօ չ'ուզեր անաւ Վարդ խաթու-
նին, ու ժխտական պատասխանով մը կը
յայտարարէ թէ՛ դա մեծ սխալ է գործի կ'ու-
զես գործել Վարդ խաթուն, քանի որ գայլ
կը շարժի նորա գլուխը ձգմելու է, եթէ
թող տանք զասոնք կենդանի, ով գիտէ ի՛նչ
որոգայթներ մեր առջեւ պիտի լարուի, ե-
թէ կարելի է, մի միջամտեր այս մասին՝
Վարդ խաթուն : Մեր կեանք խնդրէ, քեզ
համար զոհ կ'ընենք, բայց այդ մասին մի՛
ոնգէք, թող որ կառավարութեան ձեռքն
յանձնենք այս անօրէններն :

Վարդ խաթուն տեսնելով որ իր ձայն
Յարօյին չ'ազդեր, եւ Յարօն անդամադրելի
կը մնայ, Սիսակի կը դառնայ, և կը խնդրէ
որ այդ գերիներին հրաման տայ :

Սիսակ՝ որ Սոսունի սիրուն՝ պաշտելու
չափ կը յարգէր Վարդ խաթուն, այլ եւս
այդ խնդիրը կրկնել չի տար : Ինքն իր ձեռ-
քով կ'արձակէ այն կապն՝ որ կը կաշկան-
դէր անոնց վատ ձեռքերն : Աւազակներ
թէ եւ հայերէն չ'էին խօսեր, բայց շատ լաւ
կը հասկնային, երբ արձակուած գտան զի-
րենք, Վարդ խաթունի օտը իյնալով իրենց
չնորհակալութիւն յայտնեցին, ու ապա
հրացանի գնդակի պէս անհետացան :

Յարօյի համակարծիք էր նաեւ Սոսուն,
նա կը մտածէր այնքան հասուն եւ խոհուն՝
որքան լուրջ իր ընթացքն եւ շարժումը :
Ուստի հետեւեալ երկու բառով՝ շատ բան
ուզեց հասկնել, « Օձ կը սնուցանենք մենք »
գոչեց :

Նոյն գիշերն անհետ լինելու վրայ էր :
Այդ հասարակութիւնն մնացած էր ան-
բուն : Գոնէ՛, մէկ-երկու ժամ քաղցր քուն
քաշելու եւ մարմնոյ յոգնութիւնը փոքր
ինչ կազդուրելու համար կ'երթան ամեն-
քըն ալ հանդարտ սրտով մը հանգչիլ Մոր-
վէնոսի գրկաց մէջ :

Լ. Բ.

Այն գիշերն իւր ազդեցութեամբ գրե-
թէ անհաճոյ քուն մը տուաւ Սիսակին : Ե-
թէ նորա տոչորեալ սրտին մխիթարանք մը
կար, ան ալ այն ճամբորդութիւնն էր զոր
յաջորդ օրը՝ գիւղի աղամարդերի հետ եւ

Սոսունի ընկերակցութեամբ մտադրած՝ կամ այսպէս ըսենք որոշած էին ընել։ Ուստի իր այդ գիշերուան մէկ-երկու ժամու քու- նըն անցաւ այնպիսի երազներով որոնք Սո- սունի հետ Նարեկայ վանուց Երաբեքը գը- նալու ճամբորդութեան նկարագիրը կը կազմէին։ Եւ այս սիրային երազներով պա- շարուած, սաստիկ զինովի մը պէս կը զա- ռանցէր այն ամեն խօսքերն ու պարբերու- թիւներ որոնք մերթ փոխանակուած էին իրեն եւ Սոսունի միջեւ։ Իսկ Գեղեցիկն, որ իր եղբոր վիճակի վրայ մտածելով՝ իւր քունը փախած էր, ի մէջ այլոց որոշ կը ընէ հետեւեալ փոքրիկ երգի բառեր՝ զորս Սի- սակ կ'արտասանէ իր քնոյ մէջէն։

Այս, իմ հրեշտակ խօրոտիկ,
Արի՛ նստի՛ր ինձ մօտիկ,
Հերիք վառի իմ արտիկ,
Զիս չը խղճա՛ս, ա՛յ աղջիկ։

Աղջիկ, աղջիկ, ջան աղջիկ,
Հիշ գիշ չունի քո պաջիկ,
Քո հայրն եթէ զքեզ չի տայ,
Իմ գերեզման կը պեղայ։

Խղճա՛ դու զիս ո՛վ Սոսուն,
Ի սէր եղբարցդ արեւուն,
Ականջ մի տար այն դիւնն՝
Որ արգելք տայ մեր սիրուն։

Գեղեցիկն որ իր եղբոր համար այնքան կը մտածէր եւ մինչեւ իսկ շատ գիշերնե- րն անքուն կ'անցունէր, այս սրտաճառաչ երգը ընելով, վերին աստիճանի յօգնան մը կը գտաւ պարտուի ու սրտի անտանելի ցա- լէն կ'սկսի լալ՝ երբ կը մտաբերէ Սիսակի սա խօսք որ կ'ըսէր. «Քո հայրն եթէ զքեզ չի տայ, իմ գերեզման կը պեղայ»։ Իւր աղի արտասուած յորդ կայլակներէ հետ կը խառնուին նաեւ այն սրտաբուխ երգի հա- տակտորներ զոր հեկեկանօք կ'արտաբերէր եւ ամեն համարի վերջ այս բառերը կը կրկնէր։

«Սիսակ, քոյրդ տո՛ւր գերի
«Միայն փախա՞ր կատարիս»

Ու Գեղեցիկն այս հեծկտանաց հետ, սրտառուչ երգի տնտնոցը՝ Սիսակի ական- ջին զարնելով, նորա թեթեւ քունն որ ար- զէն հազար ու մէկ երազներով խռոված էր կը փախչի. անկողնէն վեր բարձրանալով Գեղեցիկն կը նայի ու աղէկէջ ձայնով մը կ'ըսէ. Ո՛հ Գեղեցիկ, քանի դժբաղդ է քո միամօր եղբայրն՝ եւ չը գիտնի՞ թէ, այդ դժբաղդ ութիւնը մինչեւ ե՞րբ պիտի տեսէ։ Ո՛վ, անագորուն ճակատագիր, վա՛յ մարդ- կային յեղեղակ վիճակին, բարէ՛, ինչքան տարօրինակ է կեանքի այն ներքին պատ- կերն՝ որ մարդկային կիրքերն ու բնական ձգտումները կը մերկանայ։ Այո՛, քոյր իմ, երջանկութիւն ըստ ինքեան անգոյ է, եւ զայն ձեռք բերելու հետաճիւտ եղնոցը ա- լելի դժբաղդ եւ ապերձանիկ են, քան ա- նոնք, որ անտարբեր են բնական եւ ան- բնական գեղեցկութեանց եւ կ'ապրին զո՛ւ սրտիւ։ Ի՛նչ միթէ, ինչ որ բնականէն մարդուս դրուած է զայն կատարելագոր- ծել եւ իրացնելը պատի՞ժ մ'է։ Ո՛հ, ո՛չ, ե- թէ այդպէս հաւատանք քրէականութեան գտաւարտութեամբ պիտի լինինք։ Մեր եկե- ղեցին եւ կրօն որ անրիժ է ինչպէս միւ- ռոն, շատ որոշ կանոններով դժած են մանաւանդ կոյսերի ամուսնութեան եղա- նակն։ Եւ քանի որ Սոսուն եւ ես կոյս ենք եւ հեռու իրարմէ, ի՛նչ արգելք կրնայ ա- ռիթ տալ մեր այսքան հալման ու մաշման, մանաւանդ որ երկուքս ալ զիրար կը սիրենք։

Այսպիսի պարագայի մ'առջեւ ի՞նչ ընեմ ես, անիծեալ ըլլայ մեր այն սովորութիւն- ներն որ կը կապեն շատ անգամ զմեզ։ Ե- թէ նորա հայրը դարձեալ յամառի, եւ չ'ուզէ Սոսունն ինձ տալ՝ մտադրած եմ ա- ռեւանգել զայն, բայց մէկ-երկու ամիս էլ պէտք է համբերել, մինչեւ լեռնարօտէն վար իջնանք եւ հունձքերը վերնան։ —Սա- կայն սիրտս, թշուառ սիրտս բնաւ չ'ունի հանգիստ։—

Գեղեցիկն՝ անմուռնջ եւ արտասուած որ կը ըսէր այս բոլորն ու խիստ կարեկցաբար կը խանդաղատէր իր անուշիկ եղբորը։

ԼԴ.

Արշալոյսը բացուելով աղօթարանի կեն- սաբեր հովը՝ Մոկաց եւ Ռշտունեաց ձիւ- նապատ լեռանց վրայէն կը սուլէր հեղիկ ու մեղմիկ եւ կուգար պահ մը մեղմել սիրոյ այն կայծն՝ որ կը տոչորէր Սիսակի եւ Սո- սունի անձը։ Վարդ խաթուն արդէն շատ կանուխ իր պարզ անկողնէն վեր ելնելով՝ աղբիւրէն պաղ ջուր բերած եւ իր նախորդ օրուան մակարգած մածունը ձըձումը լցած սկսած էր զարնել եւ իր սովորական աղօթ- քը մրմնջել։

Սոսունն՝ իր մօր ձըձմի ձայնի հետ ա- ղօթքի մրմնջալը լսելով՝ վեր կը ցատէ ան- կողնէն։ Հարկ չը կայ գրել թէ Սիսակի քունը խռովող երազներն որոքած էին նա- եւ Սոսունի այն անմեղ քունը՝ զոր քաշած էր իր պաշտելի հակի յաղթանակը տեսնե- լէ ետք։ Անմիջապէս սափօրն ուն առած, աղբիւրը կը դիմէ։ Գեղեցիկն որ արդէն քանի մը վայրկեան յառաջ լուսացուելու հա- մար հոն գնացած էր, երբ Սոսունի գալը կը տեսնէ՝ կը յամէ իւր մեկնումը։

Սոսունը՝ գեղջկական շնորհալի պարզու- թեամբ մը Գեղեցիկին մօտենալով. «Բարի՛ լո՛յս քուրիկ» կ'ըսէ։ Գեղեցիկն, որ Սիսակ եղբոր սիրուն համար կը մոգուէր գոգցես Սոսունի մէն մի բառէն, բուռն սիրով մը «Աստուծոյ բարին», հոգիս «կ'ըսէ ու նմա մերձենալով՝ կաթոգին սիրով կը գգուէ զայն ու սուրբ համբոյններով կը դրոշմեն մէկմէկու վարդապոյն այտերն։

Յետոյ Գեղեցիկը խօսք բանալով կ'ըսէ Սոսունին. «Այսօր Նարեկայ վանքի շա- րագէտն երթալու արն է, արդէն գիտէք որ ես եւ Սիսակը պատրաստութիւն տեսեր եւ գաղի՞) համար ալ խմոր չաղեր եմ, ցո- րեկուան ճաշէն ետք պիտի մեկնինք։ Մեր գիւղի բոլոր ճահիլներն, հարսներն ու աղ- ջիկները մեզ հետ կուգան։ Բայց գիտցած եղիր որ, սիրելի Սոսուն, եթէ դու չի՛ դու- նուիս այս ուխտաւորների հետ, կ'ըսէ Սի- սակը, ինքն ալ չի պիտի երթայ, այս առ- թիւ կը խնդրեմ, եթէ կը սիրես քո ձեռքը գիրն», եթէ սրտով կը սիրես նաեւ իմ մէկ եղբայրը, դուն ալ մօրմէջ խնդրէ եւ հրաման աւ միտսին այդ Ս. վանքը ուխտի երթանք, քանի որ բոլոր Վանայ, Մոկաց, Խիզանի, Գաւաշի եւ Կարճկանի ժողովուր- դը այդ օր հոն կ'երթայ եւ մանաւանդ որ մեր գիւղէն ալ շատ մը տղամարդեր եւ հարսներ մեզ պիտի ընկերանան, չ'եմ կար- ծեր որ ձեր մայրն արգելք հանէ, մինչդեռ ինքն ալ հալալ մօրմէ մ'աւելի իմ եղբայրը կը սիրէ»։

Շատ լաւ, սիրելի Գեղեցիկ, դուք հա- ւատացէ՛ք որ Սոսունը զձեզ սիրելու մէջ այնպէս անկեղծ ու պարզ է, ինչպէս ա- նարատ այս երկինքը, կ'ըսէ Սոսուն։ Բայց

1) Իւզով եփուած հաց, բաղարջ։

որքան կարելի լինի պիտի աշխատիմ համո- զել մայրս՝ այսօր ձեզ ընկերանալու, միթէ դուք չէ՞ք գիտէր թէ ես որքան կը փա- փագիմ այդ առիթը ձեռքէ չը հանել։ Ո՛հ, երանի գիտնայիր թէ՛ Սոսուն որչա՞փ կ'ա- խօրժի ձեր ընկերութենէն։ Եթէ ըսեն ինձ Սոսուն, ո՛չ հաց կեր եւ ո՛չ ջուր խմէ եւ ամիսներով Գեղեցիկի եւ Սիսակի հետ ապ- րի, հաճոյքով կ'ընդունիմ եւ ինքզինքս ա- մենէն երջանիկ եւ ամենէն հաւուստը կը համարիմ։ Եթէ ըսեն ինձ՝ Սոսուն, այս աշ- խարհն իր բոլոր հարստութեամբ քեզ կու- տանք, կ'եր խմէ, հագուէ՛ խփէ, մինակ թէ՛ Սիսակի հետ մի՛ տեսնուիր, հաւատա- ցէ՛ք՝ որ ես այն ամեն փառքն ու վայելքը կ'ատեմ, ու մի միայն Սիսակի հետ լինել եւ Սիսակի հետ ասուրելը կը սիրեմ։ Անցեալ օր խօսք եղաւ Նարեկայ շարաղէլի վրայ, մօրս ըսի թէ ես ալ պիտի երթամ, մայրիկ, այս տարի մեր գիւղէն ամեն տարիներէն շատ ուխտաւոր կ'երթան. մայրս հարցուց թէ Սիսակն ու Գեղեցիկն ալ կ'երթա՞ն, պա- տասխանեցի թէ տեղեկութիւն չ'ունիմ, ու էլ ձայն չը հանց։ Հիմա որ հիւզերն եր- թանք, պիտի խնդրեմ իրմէ որ ինձ հա- մար ալ ճամբու պաշարի պատրաստութիւն տեսնէ։

Լ. Պ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆ
(Շարանակիւն)

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ
Շ Ա Յ Ա Թ Ա Կ Ա Ն Լ Ր Ո Յ
Հոկտ. 31-էն նոյեմբ. 6
Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Գերմանիոյ գահաժառանգին հիւան- ղութիւնը եւրոպեան լրագրերն զբաղեցնող մեծ խնդիրն է տակաւին։ Գահաժառան- գին օրերը համրուած են. բայց պաշտօնա- կան բժիշկներն ըստ կարի կը ջանան այս տխուր ճամբորդութիւնն սքողել։

—Մաճառ Պատուիրակութեան Ժողովին մէջ, տեղեկաբեր Տեղ. Ֆալք, Քալնթի Կոմսի քաղաքականութիւնը ջատագովելով եւ ընդհանուր կացութեան բարեփոխմը նշանակելով, զիտել տուաւ թէ այս բար- ւոյնն զլրատու արժանիքը կը վերաբերի Պուրկարներուն, որք, ճամբարապէս զարմա- նալի ճարտարութեամբ մը զիմագրաւեցին մեծամեծ վտանգներու, եւ զարմանք պատ- ճառեցին բոլոր եւրոպիոյ։ Տեղ. Ֆալք ու- րեմն հանրային կարծեաց թարգման կը հան գիտանայ, վերստին համակրանք յայտնելով պուրկար ազգին։

—Անգլիական աղբիւրէ եկած հեռա- գրերուն նայելով, Ռուսիա տակաւին կը թեւադրէ եղբր զԹուրքիա զբաւելու ղԱ- րեւելեան Բուսելի։

—Ի Պերլին Ռուսիոյ Կայսեր եւ Կայս- րուհոյն այցելութեան առթիւ մեծ հաց- կերոյթ մը պիտի տրուի կայսերական պա- լատան մէջ եւ չքեղ ներկայացում մը Օրե- րայի թատրոնին մէջ։

—Մարնիկ Բոսի բարիգեան թղթակիցն հետեւեալը կը հեռագրէ զոր արտասուած է նաեւ Մոնիթօր։

«Ստոյգ աղբիւրէ կ'իմանամ թէ Պ. տը Լէսէրս վերջերս տեսակցութիւն մ'ունե- նալով նախարարապետ Պ. Ռուզիէի հետ ի մասին չէզոքացման Սիւէզի ջրանցքին, այդ

տեսակցութեան միջոցին շատ պնդեր է թէ հարկ է ջրանցքին չէզոքացումն ամբողջացնել Տէրութեանց ներկայելով ամբողջ Երկրորդի չէզոքացման ծրագիր մը : Պ. տը Լէսէրս այն կարծիքէն է թէ, ցորքան Երկրորդի չէզոքացման մեծ տէրութեան մը ձեռքը մնայ, Սուէզի ջրանցքին չէզոքացումը պարզապէս կատարելի մ'է : Պ. Բուվիէ ուշադրութեամբ մտիկ ըրաւ Պ. տը Լէսէրսի բռնոր տեսութիւններն եւ հրաւիրեց զնա յիշատակագրով մը ներկայել զայն առ Պ. Ֆլուրէնս : Պ. տը Լէսէրս յիշատակագիրը պատրաստելով յանձնեց առ արտաքին գործոց նախարարն : Սա յայտարարեց թէ ինք համակարծիք է Պ. տը Լէսէրսի տեսութեանց եւ թէ այս մտօք բանակցութեան պիտի մտնէ անգլ. կառավարութեան հետ : Կրնամ յարել թէ Ֆրանսայի առաջարկած եղանակը բոլորովին կը մերժէ Ֆրանսացւոց կողմէ Երկրորդի գրաւման ո՛ր եւ է գաղափար, անգամ մը որ անգլիական քօրքերն հեռանան անտի : »

—Անցեալները ծանուցուեցաւ Սերպիոյ Սինդիկէն մէկ յոյժ կարեւոր որոշում, որով սերպ եկեղեցականութիւնը կը խնդրէր « Համայն Սերպերու Պատրիարքութեան » մը հաստատումն ի Պելկրատ, իբրեւ շարունակութիւն Իլիէքի վաղեմի Պատրիարքութեան, որ Հունգարիա փոխադրուած է (Քարլովի) : Որովհետեւ Սերպիոյ մէջ Սերպիայէն դուրս ալ իշխանութիւն եւ ազդեցութիւն ունեցող Պատրիարքութեան մը հաստատումը կրնար վէճ յարուցանել ի մէջ Աւստրիոյ-Հունգարիոյ եւ Սերպիոյ, Միլան Թագաւորն որոշեց ելք չտալ Սինդիկէն որոշման, եւ այս խնդրոյ մէջ ալ Ն. Վեհափառութիւն իւր կամքը քաղեցուց հակառակ Պ. Ռիպիլիի :

—Պաշտօնային Էմիրն իմացուց Ռուսիոյ յայտեր թէ Պաշտօնային Ժողովուրդը կ'ընդունան Քէրքի կարեւոր դիրքին Ռուսաց կողմէ գրաւման : Էմիրն հետեւապէս խնդրեց որ ռուս զօրաց Զարժուէ ի Քէրքի փոխադրումն յետագոյի մինչեւ որ պաշտօնային Ժողովուրդը չհանդիսանալան ազդեցութեան :

—Գահիրէէն առնուած հեռագիր մը կը ծանուցանէ Վալանդէն Պէյըր փաշայի մահն, որ Թէ-է-Է-Քէպիլիի մէջ վախճանեց է ժանտաւտենդէ :

Ն Ե Ր Ք Ի Ն

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ Իւլայի երկրորդ աստիճան շնորհել Պոլսոյ Ապահովութեան Ստեղծի տնօրէն Վսեմ. Յակոբ էֆէնտի Ֆէնիկեանի :

Նոյնպէս գոհութեամբ կը ծանուցանենք թէ Սելանիկի կայս. կալուածոց տնօրէն անուանուած է Մեծ. Գրիգոր էֆէնտի Բաշաեան :

—Բ. Դուռը վաւերացուց Արթարի խան Նէվրուզի պաշտօնն, իբր առաջին թարգման մոյրաքաղաքիս պարսկական գետապետան :

—Վեհ. Սուլթանին հրամանաւ Բարձր. Սպարապետն հեռագիր մ'ուղղելով Կարնոյ զինուորական իշխանութեան ծանոց թէ պարսիկ զինուորական գումարտակներ կազմելով հալածել աւազակներն եւ նոցա ձերբակալման աշխատիլ ու հսկել հանրային ապահովութեան վրայ :

—Ելմտական նախարարութիւնը ծանոց հարկ եղած տեղերն թէ անտառներէ եւ հանքերէ գնուած ծառերու եւ այլոց

համար պատրաստուած պայմանագիրը պէտք է յետ այսորիկ պայմանագրութեանց խմբագիրներու կողմէ վաւերացունին :

—Վաշինկզքի օամ. զեապանատան նախարգ առաջին քարտուղար Քսէնօֆօն էֆ. Պալթաձի՝ որ այժմ Նիւ-Եորք կը բնակի՝ տեղւոյն օամ. հիւպատոս անուանուեր է :

—Ըստ որոշման Նախարարաց Խորհրդոյ, Ներքին գործոց նախարարութիւնը ծանոց Գաթաճուկի կառավարութեան՝ թէ Քէնդըրի կարօտեցող նպատակն համար տեղական կառավարութեան կողմէ որոշեալ 30 հազար քիլէ արմաթը պէտք է տալ թէ՛ անցեալ եւ թէ՛ այս տարւոյ տասանորդի փոխարէն տրուած արմաթէն որք տեղւոյն ամբարանոցաց մէջ կը գտնուին :

—Օսմանեան շոգենաւային մեծ ընկերութիւն մը կազմելու խորհուրդը գործադրման ճամբուն մէջ է : Կնքելի պայմանագրոյն ու յանձնառութեանց տետրի ծրագիրը զոր Մախուէի տնօրէն Համաի փաշա քանի մ'երեւելի սեղանաւորաց եւ վաճառականաց հետ խորհրդակցութեամբ պատրաստած էր, ընկուեցաւ յատուկ յանձնաժողովոյ մը կողմէ : Իւրաքանչիւր յօդուածի վրայ երկար եւ լուրջ վիճարանութիւններ կատարուելէ եւ ինչ ինչ բարեփոխումներ որոշուելէ յետոյ, այդ երկու ծրագիրը շարժուա ոտորագրուեցան եւ պիտի մատուցուն Վեհ. Սուլթանին :

—Կը հաւաստեն թէ, կ'ընէ Սթամբուլ, կայս. կառավարութիւնը մտադիր է երկու բարձրաստիճան եւ ազդեցիկ շէյխեր զրկել ի Մարոք, եւս առաւել ամբողջելու համար Թուրքիոյ եւ Մարոքի միջեւ կեցած բարեկամական յարաբերութիւնները :

—Ֆրանսա բնակող օամ. հպատակ վաճառական մը առաջարկած է Ասեւորական Սենեկին որ Թուրքիոյ վաճառականք եւ արուեստագէտք մասնակցին Բարիկի յառաջիկայ տիեզերական Արուեստահանդիսին :

—Կայս. հրամանաւ նոյեմբերի 15 էն սկսեալ Սելանիկի ներածեալ քարիւղի իւրաքանչիւր սնտուկին համար իբր առաջին ամսական 60 փարա, մէկ ամիս յետոյ 10 փարա եւ յետոյ զալիք ամիսներու համար 3 փարա առանձնաշնորհման ծախք պիտի գանձուի :

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Ըստ որոշման Կրօնական Ժողովոյ, եկեղեցական Պատգամաւորութիւն մը զոր կը կազմէին Կրօն. Ժողովոյ դեր-ատենապետ Գեր. Հմայեակ եպիսկոպոս Գրիգորեան, Պատրիարքական Փոխանորդ եւ նոյն Ժողովոյ անդամ Գեր. Գէորգ Մ. վարդապետ Իւթիւճեան եւ Ա. Ասեւադպիր Արթ. Ներսէս Մ. վարդապետ Ասլանեան՝ ընկերակցութեամբ Պատրիարքարանի գործադատար Մեծ. Արքայաժմէֆէնտի, երեք-չաթի ի. Դուռը գնաց եւ ներկայացաւ Մեծ-Եպարքոս Բարձր. Քեամիլ փաշային :

Պատգամաւորը Ն. Բարձրութեան մատուցին Կրօն. Ժողովոյ կողմէ ստորագրեալ գիր մը յորում մանրամասնօրէն պարզուած էին այն ծանուցեալ խնդիրներ որք առիթ տրուած են Ամեն. Տ. Յարութիւն Ա. Պատրիարքի հրաժարման : Այս, բերանացի կերպիւ եւս բացատրելէ յետոյ տղգային եւ եկեղեցական առանձնաշնորհմանց անտես առնուելով յառաջ եկած վիճակն որ առիթ տուած է Ս. Պատրիարք Հօր հրաժարման, որով ազգային գործերն անկերպարան վիճակի մը մատնուած են, պատ-

գումաւորը խնդրեցին Բարձր. Մեծ-Եպարքոսէն որ իւր ծանուցեալ արդարասիրութեամբ հաճի ընել այս խնդիրներ եւ զարժանն անօրինել որպէս զի Հայոց ազգային եւ եկեղեցական առանձնաշնորհմանը անվթար պահ պահունին եւ պատրիարքական հրաժարականի տագնապալից խնդիրը վերջ մը գտնէ :

Բարձր. Քեամիլ փաշա որ յոյժ սիրալիր կերպիւ ընդունած էր եկեղեցական Պատգամաւորութիւնը, խորին ուշադրութեամբ ունկնդրելէ յետոյ, պատասխանեց թէ կայս. կառավարութիւնը լուրջ նկատողութեան առնելով բոլոր այս խնդիրներն, անոնց դոհացուցիչ լուծում մը պիտի տայ ընդհուպ : Մեծ-Եպարքոսն յարեց թէ Տ. Յարութիւն Պատրիարքի հրաժարականը չը պիտի ընդունուի, վասն զի Ն. Ամենապատեութիւն արժանացած է Օգոստոսափառ Սուլթանի ինչպէս նաեւ կայս. կառավարութեան համակրանաց եւ փառահովածեան :

Պատգամաւորը շնորհակալութիւն յայտնելով Ն. Բարձրութեան այս լուսալից պատասխանին համար, ջերմ բարեմաղթութիւններ ըրին վասն թանկագին կենաց Վեհ. Սուլթան Համիտ Կայսեր եւ վասն բարօրութեան Նորա լուսամիտ նախարարաց եւ մեկնեցան զոհ սրտով :

(Արեւել)

—Յունաց Պատրիարքական Գեր. Փոխանորդն եւ Պատրիարքարանի գործադատարն երկուշաբթի առաւօտ Երուսաղէմաւուն գալով տեսակցեցան Ամեն. Տ. Յարութիւն Ա. Պատրիարք Հօր հետ :

Յունաց Գեր. Փոխանորդն, յանուն Ամեն. Տ. Դիոնէսիոս Պատրիարքին, ցաւ յայտնեց Ս. Պատրիարք Հօր հրաժարման համար : Յետոյ պատրիարքական հրաժարականի առիթ տուող խնդրոց վրայ երկար խօսակցութիւնք տեղի ունեցան Տ. Յարութիւն Սրբազանի եւ Ֆէնէոի Պատրիարքարանի Գեր. Փոխանորդին միջեւ :

(Նոյն)

—Կրթական նախարարութիւնն յանձնարարած է Ազգ. Պատրիարքարանին՝ մայրաքաղաքիս բոլոր ազգային վարժարանաց ցանկն հաղորդել իրեն, Տէրութեան նոր տարւոյ Սալնամէին մէջ դրուելու համար : Կրթական տեսչութիւնն այժմ այդ ցանկը կը պատրաստէ եւ կը լսենք թէ այս առթիւ վկայեալ ուսուցչաց եւ ազգային վարժարանաց մէջ գործածուելու համար ընդունուած դասագրոց ցանկն եւս պիտի հաղորդէ Կրթական նախարարութեան :

—Հինգ շաբթի, Ազգ. Պատրիարքարանի մէջ մեծ չքով տեղի ունեցաւ Պերլինի Օամ. զեապանատան խորհրդական Վսեմ. Օհան էֆէնտի Պաղտատեանի նշանախօսութիւնն ընդ Օր. Վիրգին Ներսէսեան, դուստր Մեծ. Գրիգոր էֆէնտի Ներսէսեանի : Երկու կողմէ ներկայ էին ազգականք ու բարեկամք, Վսեմ. Սիմոն պէյ Մաքսուտ, Վսեմ. Յովհաննէս էֆ. Նուրեան, Ներսէս էֆ. Ներսէսեան՝ եղբայր հարսին, Գարեգին էֆ. Պաղտատեան՝ եղբայր փեսային, Մըկըրտիչ էֆէնտի Էսաեան, Եղիա էֆ. Տէմիրճիպաշեան, Անտօն էֆ. Հաճեան, Կաւրապեա էֆ. Սըվաճեան : Փոխանորդարանի մէջ նշանախօսութեան հանդէսը կատարուելէ յետոյ, ներկայք խմբովին զնացին Երուսաղէմաւուն եւ ներկայացան Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որ իւր օրհնութեամբ նուիրադործեց նշանախօսութիւնը :

Հարսանեաց հանդէսը կը կատարուի իբրըր մէկ ամիսէն :

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍԱՐԱԳՈՐԹԵԱՆ ԿԵ ՅԱՆՁՆԱՐԱՐՆԵՐ ՀԵՏԵԻՆԱԼ ՀՈՏԱՐԻՏ ՆԻԹԻՖԵՐ Eau de Cologne Impériale. Sapoceti, օժտու արդուզարդի համար Ambrosial cream, օժտու քաղցր ամպի-
ւոզ մարգու համար. Crème de Fraises մորթի կակուզցնելու համար. Poudre de Cypria
զովացնելու եւ ձերմկցնելու համար մորթի. Stilboideփայլ ապու համար մաղերուն եւ մորու-
քին. Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու եւ մաքրելու համար գլուխը. Alcoolat
de Cochlearia աղւայներու համար. Eau de Chypre արդուզարդի համար. Թաղկինակի հա-
մար հոտուէտ նիւթեր. Hélioփաթ, Pao Rosa, Shore's capricé, Maréchale Duchesse, Ma-
rie Christine. Imperial Russe. 977 15—29



ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ և Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ.
Ընդարձակ առեւտուր գաւառաց հետ

Ձինէ եւ ճափայէ ուղղակի բեռցած
գերբնաիր եւ ամեն նաշակի յարմար բէշեր
ԳՆԵՐ ԶԱՓԱՌՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ

Փորձը ամեն զովեստէ լաւագոյն պիտի
հաստատէ հինգ տարիէ ի վեր սոյն վաճա-
րատան ըրած գոհողութիւնքն յաճախորդները
գոհացնելու համար:

Պահէ Գարու ճէլալ պէյ խանի
դրան կից թիւ 10

1000 46—78

ԽՍՅԻՆ ՊԻՐ ԱՏԷՄ

ՀԻՔԵԱՅԻ ԴԱՐԻՊԷ

Էսէրը

Յ. ԳՈՐԻՐՊԱՆ ՎԷ Մ. ՊԻՏԱՐԻ

Գուրպան Յովսէփի և Մ. Պիտարի է-
ֆէնտինները քաջալերուած ան ընդու-
նելութենէն զոր գտած էր իրենց նա-
խորդ վէպը «Իւի քաբ» եւրոպայէն»,
ձեռնարկած են ներկայ հայատառ և
Թրքաբարբառ տեղական վէպի հեղի-
նակութեան, որոյ առաջին հատորն ի
լոյս ընծայուած է արդէն և կը գըտ-
նուի ամեն գրավաճառաց քով:

1312 4—3

ՈՒՂԵՆՈՐՈՒԹԻՒՆ

ՇՈՒՐՁ ԶԼՈՒՍՆՈՎ

Դին 8 զրուշ

Հոչակաւորն ժիւլ վէրնի սոյն հետա-
քրքրաշարժ գործը գրեթէ շարունակու-
թիւնն է նոյն հեղինակին «Ուղեւորութիւն
յեթնէ Է Լաւի» անուն վէպին, որ արդէն
քանի մը տարի առաջ Մասիսի մէջ թարգ-
մանուած և մեծ ընդունելութիւն գտած
էր:

Սոյն գործոյն մէջ կը պատմուի կըն-
թիւնակի Ռուսիոյ Լուսնոյ բոլորտիքը կատա-
րած ուղեւորութիւնն և ապա վերադարձն
յոյժ հետաքրքրաշարժ մանրամասնու-
թեամբ:

Կեդրոնատեղին է Պոզանեան գրատուն,
Զաքարիաճըր-Եօզուշ թիւ 56

1256 2—3

ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ

ՀԱՅԵՐԷՆԷ Ի ԳԱՂԱԻՆԵՐԷ

Աշխարհաբէտ ԿՈՄԻՏԱՍ Ա. ՈՍԿԵԱՆ

Հրատարակուեցաւ եօթնհետամներորդ
թերթը

Բաժանորդագիրն է Մայրաքաղաքիս
համար մինչեւ 20րդ թերթը 10, գաւառաց
համար 15 դահեկան: Իսկ 20րդ թերթին
լոյս տեսած օրէն սկսեալ Մայրաքաղաքիս
համար 15, գաւառաց համար 20 դահեկան:

Յետ տպագրութեան, ամբողջ գործը պիտի
վաճառուի 20 դահեկանի:

Բաժանորդագրութեան համար պէտք է
ուղղակի դիմել Նշան Յ. Պէրպէրեան տը-
պագրատունին Պոլիս:

1245 3—3

Վասն Արտօնատեաւն
Տնօրէն-Պատասխանատու
Ս. ՏԱՄԱՏԵԱՆ.

ՏՊԱԳՐ. ԱՐԵՆԵԼԻՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐԱՅ



ՄԼՏԵՄ Ս. Ա. ԱԼԼԷՆԻՆ

ԵՇԽԵՐՎԵՐԵՆՈՒ ՄԼՁ. ՆՈՐՈԳԻՈՂ
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTOREE.)

Ճերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ
կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ղյժը և աճումը:
Վիտու թեփը շուտ մը աներևոյթ կ'ընէ: Իր անուշ
հոտը առատ է ու հեշտակ:

“Մէկ շիշը կը բաւէ:” Այդ փորձը ունեցան
ամենքը որոնցմոխրագունած մազերը իրենց ընական դոյ-
նին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան:

‘Երեկ չէ, և ամենեւին զիտն մը չընէր: Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր
կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շիշ մը ստացիր Մ. Ա. ԱԼԼԷՆԻՆ Լաւաշ-
խարհաբէտ յաղի նորոգողէն. (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTOREE.)

Վիտաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). ‘Լոյնպէս
Բարիզ ու ‘Նիու Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու և
գործներու և անգլիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւք եղբայր բրիտանական դեղատանը, Բերա, Մեծ
փողոց. Էտմընտ Գարուան, Անգլիական մթերանոց, Երեւէք Գալալըրմ. և Իզի-
տօր Լագանտէլա 435, Բերա Մեծ փողոց:



ՀԼԻՍԵՆԵԿԼԷՆ ԴԵՂԿԵՓՈՒՆԳ

ԳԵՂԵՅԿԵՓՈՒՆՈՂ ՄԼՐՄՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ
ԴԵՂԿԵՓՈՒՆ, ՄԻՇՏ ԹԵՐՄ:

Ընդամուտն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ
գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ և բազմաթիւ փոշի-
ներէ: Առաջին անգամ գործածելովն ալ, որ քանի
մը վայրկեանի գործ է, պիտի տեսնուի իսկոյն որ
երեսը, վիշը, թեւերը և ձեռքերը պիտի առ-
նուն անոյշ փափկութիւն մը և մարմարիտի
փայլ, հանգեւծ շուշանի և վարդի գունով և
բուրմամբ: Սապոնի գրգռիչ յատկութիւնները
կը հանդարտեցունէ: Ընհետ կ'ընէ մորթի սեւութը, երեսի և ձեռքի ցանկերը, արևայ-
րուքը, և ուրիշ ամեն բրտութիւն և բժաւորութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի
կ'ընէ մասնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է:

Վիտաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). ‘Լոյնպէս
Բարիզ ու ‘Նիու Եօրք: Կը վաճառուի սափրիչներու, անոյշ իւղագործներու և
անգլիացի դեղագործներու քով:

Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւք եղբայր բրիտանական դեղատանը, Բերա, Մեծ
փողոց. Էտմընտ Գարուան, Անգլիական մթերանոց, Երեւէք Գալալըրմ. և Իզի-
տօր Լագանտէլա 435, Բերա մեծ փողոց:



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱՋԵՐՈՒ:

ՄԼԷԼՐՈՂ

ՄԼՁԵՐՈՒ ՄԻՅ ՀԼՏԻՅ ՆՈՐՈԳԻՈՂ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ձերմը կամ գունաթափ
մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ
թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով մեծ շիշերու մէջ:
Վիտաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southa)pton Row). ‘Լոյնպէս
Բարիզ ու ‘Նիու Եօրք:

Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիւք եղբայր բրիտանական դեղատանը, Բերա, Մեծ
փողոց. Էտմընտ Գարուան, Անգլիական մթերանոց, Երեւէք Գալալըրմ. և Ի-
զիտօր Լագանտէլա 435, Բերա Մեծ փողոց:

